



LEGAL ADVISORY

Փաստաթուղթը մշակված է ԸԴՎԱՅՁ
Խորհրդատվական Ընկերության կողմից
Կայք՝ www.adwise.am, Էլ. փոստ՝ info@adwise.am
Հեռ.՝ +37460 54 12 95; +37491 34 94 99

«Կազմված է " ____ " _____ 201__թ
Բաղկացած է ____ թերթից
Տպագրված է ընդամենը ____ օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

« _____ » սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության միակ
հիմնադրի " " _____ 201__թ. միանձնյա
որոշմամբ որոշում թիվ 1
(հիմնադիրների
" ____ " _____ 20__թ կայացած
հիմնադիր ժողովի որոշմամբ
արձանագրություն թիվ ____)
տնօրեն՝ _____

" ____ " _____ 201__թ.

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

" ____ " _____ 20 թ
Գրանցման համար _____
ՀՎՀՀ _____

Աշխատակից՝

« _____ »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, 201__

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «_____» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:
- 1.2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
- 1.3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «_____» **սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**
կրճատ՝ «_____» **ՍՊԸ**
ռուսերեն լրիվ՝ **Общество с Ограниченной Ответственностью «_____»**
կրճատ՝ **ООО «_____»**
անգլերեն լրիվ՝ «_____» **LIMITED LIABILITY COMPANY**
կրճատ՝ «_____» **LLC**
- 1.4. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ _____:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա որպես այդպիսին գրանցվելու պահից:
- 2.2. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը:
- 2.2.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն: Եթե Ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա Ընկերությունն ունի այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:
- 2.2.2. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել բաժնեմասի չբաշխված մասի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:
- 2.2.3. Նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:



LEGAL ADVISORY

Փաստաթուղթը մշակված է ԸԴՎԱՅՁ
Խորհրդատվական Ընկերության կողմից
Կայք՝ www.adwise.am, Էլ. փոստ՝ info@adwise.am
Հեռ.՝ +37460 54 12 95; +37491 34 94 99

2.3. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից

փոխանցվում է ընկերությանը:

2.4. Ընկերության մասնակիցները կարող են ստանալ տեղեկություններ՝ ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ:

2.5. Ընկերության մասնակիցները պարտավոր են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ, որը բաժանված է _____ բաժնեմասերի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ:

Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը:

Ընկերության բոլոր _____ բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են սույն կանոնադրության հավելվածում նշված մասնակցին (մասնակիցներին):

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը:

4.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

4.3. Ընկերության մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը հրավիրում է Ընկերության տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան չորս ամիս անց: Ընկերությունն պարտավոր է ամեն տարի գումարել մասնակիցների հերթական ընդհանուր ժողովը՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար:

4.4. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից: Տնօրենը իրավունք ունի առանց լիազորության գործարքներ կատարել Ընկերության անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում ընկերության զուտ ակտիվների մեծության 25%-ից: Գործարքի չափի



LEGAL ADVISORY

Փաստաբույժը մշակված է ԸԴՎԱՅՁ
Խորհրդատվական Ընկերության կողմից
Կայք՝ www.adwise.am, Էլ. հասցե՝ info@adwise.am
Հեռ՝ +37460 54 12 95; +37491 34 94 99

սահմանափակումը չի կիրառվում մեկ մասնակցից բաղկացած ընկերությունների նկատմամբ, որն իրականացնում է տվյալ ընկերության գործադիր մարմնի գործառույթները:

«_____» ՍՊԸ
կանոնադրության հավելված

«_____»
**ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
մասնակիցների ցուցակ**

Մասնակցի քաղաքացիությունը, անունը, ազգանունը (պետությունը որտեղ հիմնադրվել է, անվանումը) անձնագրի (գրանցման) տվյալները հասցեն (գտնվելու վայրը)	բաժնեմասերի քանակը	բաժնեմասի չափը %	ստորագրություն